Թիւ 48. — Երաժշտական ի տպարանի տիրացու Յոհաննէսի և Տիրացու Յակոբա 1768։

Թիւ 49. — Նոր կտակարան հրատ. Վենետիկ Անտոնի Պոռթօլի 1766 մայիս 20։ Եկեղեցական անօթ թիւ 88 արծաթակոդք։ Ա. կողքին վրայ կայ խաչ մը սա յիշատակարանով

Ռ Յիշէ. Մ
պարօն
Սէրովբէի դուստր Զի
ալա խաթու ին սբ.
Գէորգ
Հ Եկեղեցին Զ

անկիւնի չորս գրերը կը կազմեն թուականը ՌՄՀԶ (1827)։ Գործը բաւական յաջող և գեղեցիկ է որուն տեսակը ծանօթ է իբր յիիր իշի։ Կապոյտ և կարմիր քարերով զարդարուած և չորս անկիւններն ալ ոսկեզօծուած. ծանրութիւնը 62 տրամ արծաթ։

Թիւ 50. — Կարգաւորութիւն 1795 Կ. Պոլիս տպ. Մատթէոս դպրի։ Այս հատորս ունի պուլկարերէն և հայագիր թուրքերէն գրութիւններ կէս թերթի վրայ և ունի 1231 թուականը որ հաւասար է 1782ի։ Ասիկա ճիշտ չի կրնար ըլլալ քանի որ հրատարակութեան թուականը 1795 է, այսինքն 13 տարի վերջ տպուած։

Թիւ 51. — Տօնացոյց Ա. հատոր տպագր. Պ. Արապեան Ապուչեխցիի Օրթագիւղ Կ. Պոլիս 1834։

Թիւ 52 և 53. — Խորհրդատետրներ. Յոհաննէսի և Պօղոսի Ապուչեխցւոց տպարանէն Կ. Պոլիս հրատ. ՌՄԼԶ յուլիս ԻԱ. (1787)։

Թիւ 54. — Բապպ վէ.... եան Իզմիրտէ կուլիէլմոս Կրիֆիթին պասմախանէսինտէ 1843։

Թիւ 55. — Աւետարան տպ. Կ. Պոլիս 1805ին Մահտեսի Աստուածատուրի որդի Առապեան Յոհաննէսի և Պօղոսի ի Քիւրքճի խան։ Ունի հետեւեալ ձեռագիր յիշատակարանը։

«Յիշատակ է այս սբ. Աւետարանս փրոկագործ սբ.ի գաղաքըն Ֆիւլիպէ հոչակաւոր սբ. Գէորգ եկեղեցւոյն և ետու զայս մատեանս ընծայ թուին հայ ՌՄԾԸ (1809) դեկտեմբեր ԺԸին տուաւ նորապսակ տէր Միքայել .... ի կոստանդնուպոլիս»։

Արծաթապատ կողքը կը ներկայացնէ Քրիստոսի խաչելութիւնը և յարութիւնը։ Ծանրութիւն արծաթի 840 կրամ։ Թիւ եկեղեցական անօթից 84։ Գրքիս վերջը կայ.

«Տէր ասված ՅԱՄՎ թէքտեմբեր Ի մալեը է աս քուէսմնու հաճը Գէորգ Ֆիլիպէու սուրբ Գէորգ եկեղեցիս է սուրբ աւետարանս և կամաւ».... անհասկանալի երկու երեք բառ։

Թիւ 56. — Վերոյգրեալ աւետարանին նման ուրիշ աւետարան մը արծաթապատ կողքով ընտիր գործ սա յիշատակարանով. «Յիշատակ է այս ոսկեզօծեալ արծաթապատ սբ. Աւետարանս Ֆիլիպէի Սբ. Գէորգ և Ս. խաչ եկեղեցւոյն, զոր ընծայեաց Լեւոնիկացի .... սարաֆ կապտակտ աղայն, ի յիշատակ ինչեցեալոցն ևս ՌՄՁԸ (1839) հայոց թուականին»։

Այս արժէքաւոր և չքնաղ գործը կը կրէ եկեղեցական անօթից թիւ 82, արծաթին ծանրութիւնն է կրամ 725։ Գրքին ետեւը ոսկեզօծ արծաթ տախտակի մը վրայ կայ. «Յիշատակ է սբ. Աւետարանս բոխարցի Վարդ Ճրեասանեան սարաֆ կապտակտ աղային դուռն սբ. Գէորգայ որ ի Ֆիլիպէ ՌՄՁԸ (1839)։

Թիւ 57 և 58. — Էջմիածին տպուած երկու մաշտոցներ, 1905։

Թիւ 59. — Նարեկ Կ. Պոլիս 1858 Յ. Միւհենտիսեան։ Ունի սա յիշատակարանը։ «Այս նարեկը Պետրոս Պողոսեան կուսաց սբ. Աշակերտն վարդանանց զօրավարին դպրատուն ևին 1863 յունվար 20։ Յետոյ ևերսի կողմը». «Այս նարեկը Պետրոս Պողոսեանինն է Աստուած շնորհք տայ ամեն. 1869 մարտ 26»։

Թիւ 60 և 61. — Տօնացոյց 1808 Երուսաղեմ։

Թիւ 62 և 63. — Ջայնքաղ շարական 1884 Երուսաղեմ։

Ասոնցմէ զատ կան ուրիշ 7 կամ 8 հատորներ քայքայուած և անկարեւոր, որոնց մասին հոս խօսիլ աւելորդ է։ Այս ցանկը վերջացնելէս առաջ կ'ուզեմ աւելցնել որ տրուած թիւերը (մէկէն մինչեւ վաթսուն և երեք) պարզապէս իմ կողմէս տրուած թիւեր են ապագայ աշխատանքները աւելի հեշտ ընելու համար, քանի որ Պուլկարահայոց պատմութեան ընդարձակ և մանրամասն և կարեւոր գործին համար օգտակար պիտի կարենան ըլլալ այս և ասոր նման հրատարակութիւններս Բազմավէպի մէջ։

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ